ճակին իւրոյ յաշխարհին ունի զօրութիւն հրամայելոյ խորհրդակցօք հանդերձ, ըստ համեմատութեան Օրինացն հայոց, և ամենայն զօրագլուխ և որ ոք մանաւոր յիշխանք նոյն վիճակի յաշխարհի ճանաչել պարտ են զօրութիւն նորայ, իբրև զօրութիւն տանն հայոց, եթէ գտցի անթերի և անսխալ համեմատ ըստ օրինացն հայաստանեաց, և ոչ ինչ մաղ մի չափաւորութեան և արժանաւորութեան ընդ դէմ տանն հայոց։

ԳԼՈՒԽ ՅԿԳ.

Ով ոք հրաւիրեսցի բարեկամաց իւրոց 'ի տունս իւր պատուելոյ նոցայ ճաշ և ընթրիս, եթէ իշխանաց և եթէ բամբշաց, և եթէ հասարակ ժողովրդոց և տիկնաց, պարտ է ճանաչիլ աստիճանս իշխանաց և բամբշաց, և ապա հարկաւոր է հրաւիրումն շարել 'ի յերեսս թղթոյ, ծանուցանելով սեղանն իւր որ ունի այսքան աթոռ բազմելոյ, երկրորդ նշանաւորեսցի անունք հրաւիրեցելոց համարաւ այսինքն.

Նոմրայ	1 Մարտիրոս	առաջի 'ի աջ գթեւ.
	2 Բաղրամ	երկրորդ
	3 Յարութիւն	երրորդ
	4 Մաղաքիայ	չորրորդ
	5 Զաքարիայ	հինգերորդ
	6 Մանասէ	վեցերորդ